ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<21>> հուլիսի 2022թ. N ՄՈ/468-2022

ք. Արմավիր

«ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՄԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Արմեն Առաքելյանի 2022 թվականի հուլիսի 20-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Լուսագյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արմեն Առաքելյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդ՝ 2022 թվականի հուլիսի 26-ից օգոստոսի 29-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Արմեն Առաքելյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Լուսագյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Լուսագյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Նարինե Սաֆարյանին:
3. «Լուսագյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Նարինե Սաֆարյանի աշխատավարձի վճարումը 2022 թվականի հուլիսի 26-ից օգոստոսի 29-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Արմեն Առաքելյանին աշխատանքի մեջ համարել 2022 թվականի օգոստոսի 30-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

21.07.2022

X

VERIFIED OCSP 21.07.2022 17:40:26 GMT+4

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ